«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
Նախագահ Լ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 24.11.2016թ. N 313-ի 5 գրության (այսուհետ՝ Գրություն)՝ հայտնում ենք հետևյալը.

Գրության 1-ին կետի կապակցությամբ հայտնում ենք, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ծառայողական մեքենաների պահպանման համար 2016 թվականի ընթացքում 4252 (մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածով ծախսվել է 7 579 200 (յոթ միլիոն հինգ հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

Ինչ վերաբերում է Գրության 2-րդ կետով պահանջվող տեղեկատվությանը, ապա հայտնում ենք, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ծառայողական մեքենաների պահպանման համար գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ ծառայությունների մատուցման պայմանագրեր են կնքվել «Տոյոտա Երևան» և «Գարանտսերվիս» ՍՊԸ-ների հետ: Ընդ որում, «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվել է բանակցային ընթացակարգով և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշման 3-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն պատվիրատուն իր կարիքների համար գնումներ կատարելու նպատակով կազմակերպված գնման գործընթացի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հրապարակումը տեղադրել է www.gnumner.am ինտերնետային կայքի՝ «Գնումների հայտարարություններ» բաժնի «Կնքված պայմանագրերի մասին հայտարարություններ» ենթաբաժնում: «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի հետ

ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվել է շրջանակային համաձայնագրի հիման վրա, իսկ ՀՀ օրենսդրությունը նման ընթացակարգով կնքված գնման պայմանագրի հրապարակում չի պահանջում: Միաժամանակ հայտնում ենք, որ նշված պայմանագրում պարունակվող տեղեկությունները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի համաձայն համարվում են առևտրային գաղտնիք, ուստի վերոհիշյալ պայմանագրի պատճենը ենթակա չէ տրամադրման:

ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվության և
հասարակայնության հետ կապերի բաժին